լով անցանք Զիչխան և Մանտակներ կամ Մանտակներ գետակաց վրայէն, աջ կողմերնիս Թողինք ի հարաւ արեւելս տարածուած դաշտն և ձախերնիս Շահկեօլ և Կօռէ լեռներն, մտանք Խաչլու գիւղն. այստեղ քիչ քիչ հիւսիսախառն պիտի բարձրանանք, մերձ երկու ժամ ձախ կողմերնիս ցմիշտ ունենալով Զօմի ձորակն և որոյ վերջաւորութեան վերայ ճօճ (ճահճային, ճօճացող գետին) կոչուած վայրն, իսկ աջ կողմերնիս մերձ մեր ուղղոյն ող մի և որոյ ետևն Եդման կամ Երդման ձորակն, սորա գլխուն վերայ Կանիէ-Խիզան (աղջկանց աղբիւր): Այս տեղ երկու վայրկենի չափ կը խոնարհինք բլուրէ մի վայր, կուղղուինք արևելեան հիւսիս 1 ժամ, աջ կողմերնիս ճանապարհէ խոնարհ կը թողուինք Ազրայէլ քրդական գիւղն, Մուրատի չայիրներն և մի ճահճային վայր կանգ կառնենք. ձախ կողմերնիս զառիվերի բարձրութեան վերայ կայ Ղարա-ՃԷՀԷՆՆԷՄ քրդական գիւղն և մէկ ժամ ի հիւսիս բարձր Վուարէ Ղըսղանճ քուրդ վրանաբնակներու վարատեղին, որոյ բարձրութեան վերայ Բօղ-Թէփէ լեռն: Ասոր նոյն ուղղութեամբ 1/4 ժամ շարունակելով կը խոնարհինք 3 վայրկենի չափ Քարոտ գլխիվերն: Այս տեղ կը պատահինք Գալոյի կամ Զաթայ ջրին, որոյ աջ ափն ի վեր երկու ժամ գեղեցիկ և տափարակ ճանապարհ մի կը բռնենք մինչև Զաթայ և Գալոյի ջրերու խառնուրդն, աջ կողմերնիս ի հարաւոյ ջրոյն թողլով Ցէտէ-Մագսուտ քուրդ գիւղն և սորա վերան բարձրացող Ցէտէ-Մուրատ լեռն: Այս թեւի վերայ ևս թողուցինք երկու կամնիկ գիւղերն և որոց ձորդուռն, անցած ենք նաև Գալոյի ջրի աջ ափի վերայ բարձրացած Ամրոց քարի հիւսիսային կշռեն: Արդէն ձախ կողմերնիս խիստ զառիվեր մի մինչև Բօղ-